ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԹԱՆԹՈՒԿՆԵՐՔ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 12

ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1|2
1889

ՋՀԱՆԳԻՐ-ԽԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ—ԻՆԻԿՕԼՕՊԵԱՆ
Պարսից Նախարար.

ՋԼՀՆՑԱԾ ԱՔՏԸ

ՆԵԿՐԱՍՈՎԻՑ (ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ)

(ՆՐԻՒՐ ԻՄ ՊԱՊԱՋԱՆԻՆ)

Շուն է խորին. ծիծեռը թրռաւ,
Չրնձւորի դործը վաղուց վերջացաւ...
Դաշտը ամայի, անտառը դեղնած,
Երկինքը մրռայլ մըշուշով պատած:

Եւ մի արտ միայն չրհրնձւած Հեռւում
Մնում է անտէր, կարծես, որբացած...
Լիքը Հասկերը խըշշում են տըրտում,
Ցողքում անձայն, զրլխակոր թեքւած:

«Էլ ինչ է սպասում, ինչու՞ չի գալիս...
«Յողնեցանք, երկար սպասելով նըրան...
«Մինչև ե՞րբ, ախը՛ր, առանց կարեկից
«Տանեն՛ք անմրռունչ ծաղրանքը աշնան...

«Ջարդում է քամին մեզ օր ու գիշեր,
«Ցիր ու ցան թափում Հասուն Հատիկները...
«Անձրևը թրջում, ազռաւը լսիում...
«Վախկոտ նապաստակն անգամ կոխոտում:

«Եւ ինչու՞ թողեց նա մեզ սև օրին...
«Միթե մոռցաւ որ աշուն է խորին»:...
Հողմը սուլում է տխուր պատասխան.
«Ձեր տիրոջ ոյժերն, աւա՜ղ, սպառւեցան»:

Ֆ. ԲԱԼՈՒՔԵԱՆ

Ա Յ Ծ Ա Տ Ո Ւ Ր

(Հ Ե Ք Ի Ա Թ)



1.

Լել է չի էլել մի Հարուստ սովդաքար։ Այս սովդաքարը իր քարւանով իջնում է մեկ գիշեր մի դիւղի մօտ։ Կէս գիշերին վեր է կենում որ պտըտի քարւանի չորս կողմով և պատւէր տայ պահապաններին, որ արթուն մնան, մէկ էլ տեսնում է՝ երկու մարդ դուրս եկան գիւղից, նրանց առաջը եկաւ մի ուրիշ մարդ և հարցրեց.

—Ի՞նչ բախտ դրեցիք նորածին մանուկի համար։

Մարդիկը պատասխանեցին.

—Այոտեղ իջած սովդաքարի՞ բախտը նրան տըւինք։

Այս ասացին մարդիկը և իսկոյն աներեւոյթ եղան։

Սովդաքարն իսկոյն իմացաւ, որ նրանք երեխանց ճակատի վրայ նրանց բախտը գրող հրեշտակները էին. շատ տխրեց, որ իր բախտը տըւել են մի նորածին մանուկի. էլ նրա քունը չըտարաւ այն գիշերը։

Լուսացաւ թէ չէ, սովդաքարը գնաց գիւղը և հարց ու փորձ անելով իմացաւ, թէ ում տանն է երեխայ ծընուել այն գիշերը։ Գնաց տեսաւ բարուրի մէջ մի սիրուն

փափիկ տղայ, և առաջարկեց նրա հօրն ու մօրը, որ երեխան իրան տան։

—Ես մեծ կարողութեան տէր եմ, ասաց, բայց որդի չունիմ։ Ես դրան կը որդեգրեմ, բոլոր ունեցած չունեցածս դրան կրտամ, ձեր ապրուստն էլ կըհոգամ։

Ծնողաց համար շատ դժւար էր համաձայնիլ մի այսպիսի առաջարկութեան, մանաւանդ ծննդական մօր համար, բայց որովհետև իրանք աղքատ էին, չըգիտէին ինչ անեն, տան թէ չըտան։ Հաւաքեցան դրացիները և ամեն կողմից սկսեցին համոզել ծնողացը, որ իրանց որդու բախտաւորութեանը արգելք չըլինին։—Առանց դրան էլ զաւակներ շատ ունիք—ասացին նրանք— և էլի կունենաք. դուք հաղիւ նրանց կարող էք պահել. այդ մէկն էլ տըւէք այս պարոնին, թող գնայ. հարուստ մարդ կըդառնայ, ձեզ էլ կըհարստացնէ։

Սրա վրայ ծնողքը յօժարեցան և երեխային մի քանի ոսկով տըւին սովդաքարին։

Սովդաքարը տարաւ երեխային իր քարւանը և ճանապարհ ընկաւ դէպի իր գնալու աշխարհը։ Շատ գնաց թէ քիչ, Աստւած գիտէ, երբ որ հասան մի ջրառատ և գեղեցիկ հովիտ, այդտեղ իջան հանգստանալու։

—Սրանից էլ թաքուն տեղ չի լինիլ, մտածեց սովդաքարը. հիմա ես սրան թաղել կրտամ այս հովտումը, տեսնեմ այնուհետև էլ ինչպէս պէտք խլէ ինձանից իմ բախտը։

Կանչեց իր հաւատարիմ ծառային և ասաց.—Առ այս երեխային և տար մատաղ արա ինձ համար. միայն սիրտն ու թոքը բեր ինձ։

Սովդաքարը կարծում էր, որ երեխայի սիրտն ու թոքը կըվերադարձնեն իր բախտը։

2.

Եղանակը ամառնային էր և տարին երաշտ։ Բայց ջրարբի և դալարագեղ հովիտը մի լեռնային տեղ էր և շատ գեղեցիկ ամարանոց խաշնարած ժողովրդի համար։

Սովդաքարի ծառան երբ որ երեխային բոլորովին հեռացրեց քարւանից և անցաւ մի բլրակի քամակ, այստեղ տեսաւ հօտերով ոչխարները և սկսեց մտածել ինքն իրան...

—Ո՛չ, անիրա՛ւ աղաս, ես քո անզուգ հաճոյքը կատարել չեմ կարող։

Այսպէս մտածեց ծառան, և երեխային մի թփի տակ դնելով՝ նրա պահպանութիւնը յանձնեց վերին Նախախնամութեան։

Ոչխարի հօտը հեռու չէր։ Ծառան դիմեց հովիւներին, գնեց մի փոքրիկ ուլ, մորթեց և սիրտն ու թոքը հանելով՝ տարաւ իր աղային։ Սովդաքարը խորովեց, կերաւ և մխամուխելով՝ շարունակեց իր ճանապարհը։

3.

Ոչխարի հօտը կամաց-կամաց սփռւելով հովտի մէջ, հասաւ այն թփին, ուր պրած էր երեխան։ Մի կթի այծի ծծեր այնքան լցել էին, որ քիչ էր մնում տրաքւէին. մի ծծկեր կենդանի էր փնտրում որ թեթեւացնել տար իր ծանրութիւնը։ Նա որ տեսաւ երեխային թփի տակ ուլի պէս հեկեկալիս, խոյոյն մօտեցաւ և ծիծը պրաւ բերանին։ Քաջառողջ և ուժեղ մանուկը սկսեց ծծել այնքան, որ բոլորովին դատարկեց այծի ծծերը։ Թէ այծը և թէ մանուկը հաւասարապէս դոհ մնացին այս անակընկալ դէպքից։ Այս բանը սովորութիւն դարձաւ այծի համար. ամենայն օր մի և նոյն ժամին, ուր էլ որ լինէր հօտը, նա ջոկւում էր և վազում դէպի մանուկը, որ ծիծ տայ նրան։

Այս կլճի այծը պատկանում էր մի պառաւի։ Պառաւը մի քանի օր վրայ-վրայ զրկւեցաւ կաթից. այծը դնում էր տուն դառարկ կրծքով։ Ձատ նեղացաւ պառաւը և դնաց Հովիւների հետ կռւեց։

—Դուք էք կթում իմ այծը, ասում է պառաւը և մեղադրում Հովիւներին։ Իսկ Հովիւները պատասխանում են.

—Ե՛րկինք, դետինք, մենք տեղեկութիւն չունինք։ Մենք որ կթելու լինինք, քո միակ այծը չենք կթիլ, այլ նրանցը կրկթենք, որոնք մէկի տեղ մի քանիսն ունին։ Բայց քո այծը սովորութիւն է արել յանկարծ անյայտանալու։ Մէկ էլ նայում ենք որ չըկայ, ուր է գնում— չըգիտենք։ Կուզես մէկ օր եկ, դու ինքդ տես աչքովդ, որ Հաւատաս։

Պառաւը մէկ օր այծի հետ գնաց ոչխարը և աչքը չըհեռացրեց նրանից։ Կէսօրի մօտ ժամանակը, երբ այծի կուրծքն արդէն լցւել էր, նա ուռս ու փուս քաշւեց դէպի մանուկը։ Պառաւն սկսեց հետևել նրան։ Այծը կանգ առաւ մի թփի տակ և երկար մնալուց յետոյ վերադարձաւ դառարկ կրծքով։ Պառաւը մօտեցաւ թփին և տեսաւ մի հրաշագեղ երեխայ։ Պառաւի ուրախութեանն էլ չափ չըկար։

—Այս լաւ դառաւ, ասաց նա, եթէ մի քանի օր կաթից զրկւեցայ, դրա փոխարէն Աստուած ինձ մի որդի տըւաւ. կըտանեմ, կըպահեմ, կըմեծանայ, ինքն էլ ինձ կըպահի։ Գրկեց երեխային, տարաւ մօտիկ վտակում խըչխըչալի լողացրեց, փաթաթեց իր չարսաւում և ստէպ ստէպ համբուրելով՝ տարաւ տուն։ Տղան մեծացաւ և յիրաւի, դառաւ պառաւի ծերութեան նեցուկը, նրա պահապանը։ Եւ որովհետև սկզբում այծն էր պահպանել նրան, այդ պատճառով նրա անունը դրին Այծատուր, ասում էին և «Այծի տղայ» մականունով։

4.

Այծատուրը դառել էր արդէն տասնըվեց տասնըեօթը տարեկան և մի հրաշագեղ, խելօք, ժրաջան և ամենքին սիրելի երիտասարդ էր։ Այս միջոցներին սովդաքարը մեծ քարւանով եկաւ իջաւ այս գիւղումը։ Հիւրասէր գիւղացիք շրջապատեցին սովդաքարին և մեծ պատուով ընդունեցին։ Ամենից առաջ նրա ձիու կապը բռնեց Այծատուրը, օգնեց նրան իջնել ձիուց և ինքն սկսեց ձին ման անել, որ հանգստացնէ հոգնածութիւնից։ Երբ որ ձին կապեց և խոտ տւաւ, սկսեց իրան սովդաքարին ծառայել և կերակուր պատրաստել։ Սովդաքարին շատ դիւր եկաւ Այծատուրը. նրա քաղաքավարի խօսք ու զրոյցը, շարժմունքը, ճարպիկութիւնը սովդաքարի ուշադրութիւնն այնպէս գրաւեցին, որ ուզեց նրան իր մօտ վերցնել։ Սկսեց հարց ու փորձ անել և տղան պարզմտութեամբ պատմեց իր ծագումը, ինչպէս որ լսել էր, և իբրև ապացոյց իր ասածի ճշմարտութեան, վկայ բերաւ իր Այծատուր անունը։

Սովդաքարն խոկոյն մատը կծեց—Էր՛մ, ասաց իր մտքումը, սա իմ վերցրած մանուկը պէտք է լինի, և հէնց այստեղ էլ հրամայեցի, որ սպանեն նրան, բայց բանից դուրս է գալիս, որ ծառաս չի կատարել իմ հրամանը, և հէնց տարիքն էլ համապատասխանում են նոյն տարւան։

—Այծատուր որդի, ասաց սովդաքարը, կուզե՞ս ինձ մօտ մնալ. ես քեզ կընշանակեմ գլխաւոր վերակացու իմ բոլոր ունեցած չունեցածի վրայ. դու խելօք տղայ ես երևում, լաւ ապագայ կունենաս։

—Ես այդպիսի բախտից վախչող չեմ, ասաց Այծատուրը, երբ որ դուք այդչափ ողորմած և բարի կըլինիք դէպի ինձ, ես էլ կաշխատեմ երախտահատոյց լինել և յոյս ունիմ, որ ամօթով չեմ մնալ ձեզ մօտ։

Ինչ ասել կուզի, որ սովդաքարի նպատակը չար էր։

Նա ոչ թէ Այծատուրի բախտը, այլ նրա անբախտութիւնն ու մահն էր ուզում:

Այծատուրը յուսադրելով իր խնամակալ պառաւին, որ շուտով չեա կըդառնայ և նրան մենակ չի թողնիլ, մնաս բարև արաւ, գնաց սովդաքարի հետ:

5.

Մեծ Հարստութեան տէր էր սովդաքարը: Երբ որ նրա քարվանի ծայրը բացւում էր, էլ վերջը չէր կտրւում: Հազարաւոր ուղտեր ձիանք և ջորիք միայն նրա վաճառքն էին մի քաղաքից միւս քաղաք տեղափոխում: Ի՞նչ ճոթեղէն, ի՞նչ ակնեղէն, ինչ մրգեղէն ու համեմունք աոես, որ նա չունենար: Ով ինչ ուներ ծախելու, նրա առնելուն էր սպասում, ով ինչ դնելու ուներ, նրա ապրանքի գալուն էր սպասում: Երբ որ տանից դուրս էր գալիս, էլ տալիներով չէր վերադառնում. պատահում էր, որ ամիսներով ճանապարհ էր գնում, օրինակ Հնդստանից մինչև Խորասան, Խորասանից մինչև Թիֆլիս, Թիֆլիսից մինչև Հաշտարխան: Տուն ունէր ինչպէս թագաւորական պալատ. շահերն ու սուլթանները նրանից էին փող պարտք առնում, նրա թանգագին ընծաներին սպասում:

Նա կին ուներ, բայց արու զաւակ չունէր, այլ մի աղջիկ միայն, որ ինչքան զեղեցիկ էր, նոյնքան և բարի ու խելօք. Գոհարիկ էր անունը և արդէն տասնըհինգ տարին լրացրած մի նախանձելի հասունացու էր:

Սովդաքարն այժմ իր քարւանով դէպի տուն էր վերադառնում և հինգ օրից յետոյ պիտի հասնէր: Մի նամակ գրեց, տրաւ Այծատուրին և մի լաւ ձի տալով ասաց.

—Այս նամակը կըհասցնես մեր տուն և քո ձեռքով կըտաս իմ կնոջը:

Այծատուրը, որ մի առիթ էր որոնում իր պարոնի

հրամանը մտերմութեամբ և անյապաղ կատարելու, նամակը ծոցումը դրաւ և ձին նստեց թէ չէ՝ թև առաւ թռաւ դէպի սովդաքարի տունը։

Միւս օրը ճաշի ժամանակ հասաւ սովդաքարի տունը։ Ամառն էր. բաւական շոգ օր էր։ Իջաւ ձիուցը, ձին կապեց մի ծառի ստւերում, իսկ ինքը մտեցաւ տան դրան։ Տեսաւ դուռը կողքած է, էլ չուզեցաւ անհանդստացնել ներսը եղողներին. թեք ընկաւ պատի տակին և սաստիկ հոգնածութիւնից ու անքնութիւնից իսկոյն քունը տարաւ։

Մեր Այծատուրը այսպէս քնի մէջ ով գիտէ ինչ էր տեսնում երազումը, բայց արեգակի այրող ճառագայթների տակ կարմրել էր և քրտնել այնպէս, ինչպէս մայիսի կարմիր վարդը մարգարտեայ ցօղի կաթիլներով։ Իր այս պատկերով նա ուղիղ Գոհարիկի սենեակի պատուհանի դիմացն էր։ Ով գիտէ, ինչ անյայտ դրդումից ստիպւած, Գոհարիկը բաց արաւ սենեակի պատուհանը և յանկարծ որ չըտեսաւ Այծատուրի ցօղաթաթախ վարդագեղ դէմքը, մնաց տեղն ու տեղը մեխւած, իր կեանքումը տեսած չէր մի այսպիսի հրաշագեղ պատկեր։ Էլ աչքը չըհեռացրեց. հանգամանքը յաջող էր, որովհետև իրան գրաւող երիտասարդը քնած էր և կարող չէր տեսնել նրան։ Այսպէս որ շատ նայեց Գոհարիկը, մի նամակի ծայր նշմարեց տղայի ծոցից դուրս եկած, յետոյ էլ տեսաւ ձին և ճանաչեց։

—Սրան անպատճառ իմ Հայրս կրկինի ուղարկած իր գալուստն իմաց տալու, ասաց աղջիկն իր մտքումը և առանց երկար մտածելու՝ իջաւ վերևից և Այծատուրի ծոցից նամակը կամացուկ դուրս քաշեց ու կրկին թռաւ դէպի վեր՝ իր սենակը։

Գոհարիկը բաց արաւ նամակը և կարդաց հետևեալը—

„ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՐՈՒՍԻՆ,

«Այս գրաբեր երիտասարդը քեզ մօտ Հասնի թէ չէ,

«սիրով կընդունես, որ ոչ մի կասկած չըտանէ, և սրով «կըլինի Թէ հրով, Թոյնով կըլինի, Թէ պարանով, ան- «յապաղ վերջ կըտաս դրա կեանքին: Ես հինգ օրից այդ- «տեղ կըլինիմ և դրան չըպիտի տեսնեմ կենդանի:

Ֆ ո ա մ ո ւ ս ի ն»:

Գոհարիկը կարդաց այս նամակը և իր ոչ աչքերին և ոչ ականջին չըհաւատաց: Ո՛չ, երևի Հայրս ուզեցել է գրել ահա ինչ—և սկսեց գրել Հետևեալը—

„ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՄՈՒՍԻՆ,

«Այս գրաբեր երիտասարդը քեզ մօտ հասնի Թէ չէ, «իսկոյն իմ Գոհարիկս դրան կըտաս և կըպատակես, այն- «պէս որ մինչև իմ գալս ամեն ինչ վերջացած լինի:

Ֆ ո ա մ ո ւ ս ի ն»:

Գոհարիկն այս նամակը գրեց կարծես անգիտակցա- բար, առանց իրան որ և է հաշիւ տալու և տարաւ դը- րաւ Այծատուրի ծոցումը: Այս գործողութիւնը կատարե- լուց յետոյ Գոհարիկը սուս ու փուս վեր բարձրացաւ, այ- րեց իր հօր նամակը և որպէս զի Այծատուրին երկար չը Թողնէ արևի տակ, ուրախ-ուրախ ներս մտնելով մօր սե- նեակը՝ ասաց.

—Մայրիկ, նայիր, մեր դռանը մի անծանօթ երի- տասարդ կայ քնած: Նա ձիով է եկել, իսկ ձին Հայրի- կինն է. ուրեմն նա մի լրաբեր պէտք է լինի: Չարկաւոր է նրան զարԹեցնել և վեր կանչել:

Ծառաները ուրիշ տեղ էին գնացել, տանը ոչ ոք չը կար բացի մօրից և աղջկանից: Մայրը իջաւ ներքև և Այծատուրին զարԹեցրեց:

Այծատուրը ներողութիւն խնդրեց տիրուհուց և ծո- ցից նամակը հանելով տըւաւ իրան:

Տիրուհին նամակը կարդաց և տղայի երեսին նայելով՝ մի առանձին ուրախութիւն և հաճոյք ղգաց։

—Դու դիտէս այս նամակումն ինչ է գրած, հարցրեց տիրուհին։

—Ո՛չ, ինձ յայտնի չէ, տիրուհի։

—Երևում է, որ յայտնի չէ, եթէ ոչ՝ էլ ինչ կըտանէր քունըդ։ Գնանք վերև, ես այնտեղ քեզ կըյայտնեմ, թէ ինչ է գրած։

Տիրուհու նպատակն էր՝ տեսնել թէ ինչ ներդործութիւն կանէ աղջկայ վրայ հօր կամքը։

Տիրուհու սիրալիր ընդունելութիւնը բաւական քաջութիւն տըւաւ Այծատուրին, թէև նա առանց այս էլ իր հոգեկան անմեղ վիճակից դուրս չէր կարող գալ. նա ոչ ամօթխած էր և ոչ յանդուգն. ազատ էր երկու ծայրերից էլ իբրև բնութեան անարատ զաւակ։

Երբ որ վերև բարձրացան, նրանց դիմաւորեց Գոհարիկը և սկսեց հարց ու փորձ անել հօր մասին, նրա առողջութեան, իսկ մօրից հարցրեց, թէ ինչ է գրել հայրը։

Այծատուրը միայն հէքիաթներումն էր լսած Գոհարիկի նման գեղեցկուհիների մասին, և ինքն իրան շատ երջանիկ ղգաց, որ այնպիսի մի դիցուհու նըւաստ ծառան պիտի լինի։ Նա չէր կարող մտքովն անգամ անց կացնել, որ կարող է ծառայից էլ աւելի բարձր լինել և նրան իրան կողակից և լծակից համարել։

—Անունըդ ինչ է, որդի, հարցրեց տիրուհին։

—Այծատուր է,—պատասխանեց տղան, Այծատուր անունից ամաչելով։

—Աստուածատո՛ւր... Դիտէս, Աստուածատուր, իմ ամուսինս գրել է, որ դու դաս թէ չէ՝ իմ աղջիկը քեզ տամ. սա է, ահա, իմ աղջիկը։ Ես չեմ կարող ընդդէմ կենալ նրա կամքին և իմ կողմից արգելք չըկայ. բայց եթէ դու

կամ սա յօժար չէք լինիլ, այդ բանումը ես մեղաւոր չեմ լինիլ, պատասխանատուն դուք կըլինիք։

Այս ասելով Տիրուհին նամակը տըւաւ աղջկանը։

Այծատուրը այնպէս կարծեց, թէ երազումն է տեսնում այս ամենքը, մնաց լուռ և վեր քաշուած, ոչ ինչ չը կարաց խօսել։ Իսկ Գոհարիկն ասաց.

—Ես հնազանդ եմ իմ հօր կամքին, բայց չեմ կարող բռնութեամբ տիրել մի երիտասարդի սրտի վրայ, զուցէ նա համաձայն չէ։

Այծատուրը տեսաւ, որ իր տեսածը երազ չէ և ոչ հանաք են անում իր հետ, բոլոր ուժը մի տեղ հաւաքելով՝ ասաց.

—Ես ոչ պակաս հնազանդ եմ իմ տիրոջ կամքին. նա որ ինձ հրամայէ, թէ դնա ջուրն ընկիր, կընկնիմ, ուր մնաց որ նա ինձ ջուրը չի ձգում, այլ հանում է ջրից։

—Ուրեմն ամեն ինչ վերջացած է, ասաց տիրուհին և կանչեց ծխատէր Հոգևորականին, որին ցոյց տալով իր ամուսնու նամակը, խնդրեց, որ շուտով պսակի ծէսը կատարէ։

6.

Հինգ օրից յետոյ սովդաքարը եկաւ։ Հէնց որ տան գաւիթը մտաւ, տեսաւ Այծատուրին իր աղջկայ հետ ուրախ զարթ ճեմելիս իր հոյակապ տան պատշգամբի վրայ։

—Այս ինչ խաղ է, մտածեց նա.—երևում է, որ իմ գրածի հակառակ սա ամուսնացել է իմ աղջկան վրայ։ Ուրեմն ես էլ ինձ այնպէս ցոյց կըտամ, որ իբր թէ իմ կամքն էլ այդպէս է եղել։ Ներս մտաւ ուրախ զրւարթ, բարևեց ամենքին և դառնալով տղային ու աղջկան՝ հարցրեց կնոջը՝ արդեօք կարող եմ շնորհաւորել։

—Այո, այո, ասաց կինը.—ինչպէս որ գրել էիր, թէ

մինչև իմ գալս պսակած պրծած լինին, ես էլ անյապաղ կատարեցի քո կամքը։

Այտեղ մարդը գլխի ընկաւ, որ իր նամակի բովանդակութիւնը փոխած է և կասկած տարաւ Այծատուրի վրայ, թէ նա՛ ինքը կըլինէր փոխած և մտածեց վրէժխնդիր լինել։

Միւս օրը գնաց իր այգին և այգեպանին պատւիրեց մի խոր Հոր փորել, և ամբողջ գիշեր կրակ վառել նրանում. իսկ վաղը առաւօտեան, ասաց, մի մարդ կուղարկեմ այտեղ. Հէնց մտնի թէ չէ, բռնեցէք և ձգեցէք նոյն Հորի մէջ և վրան նոր ցախ ածեցէք և այրեցէք։

Սովդաքարն ինչպէս ասաց, այգեպաններն էլ այնպէս պատրաստեցին։

7.

Երեկոյեան ընթրիքի ժամանակ սովդաքարը դառնալով Այծատուրին՝ ասաց.

— Ես թէպէտ դրեցի, որ պսակն առանց ինձ կատարւի, բայց հիմա տեսնում եմ, որ շատ եմ շտապել։ Այդ նրա համար արի, որ ինձ շատ դիւր եկար։ Ի՞նչ կասեն քաղաքացիք. չէ՞ն ասիլ, թէ ինչո՞ւ ժլատութիւն արաւ և պսակն առանց Հրաւէրքի կատարեց։ Վաղը պէտք է մեծ Հրաւէրք սարքեմ և ես ինքս կրտեսնեմ բոլոր պատրաստութիւնը։ Քեզ կրխնդրեմ միայն, որ գնաս այգին և այնտեղ Թարմ մրգեղէնի պատրաստութիւնը ինքդ տեսնես. չըմոռանաս նաև Թարմ ծաղիկներից բազմաթիւ փունջեր շինել տալ։

Միւս օրը Այծատուրը վեր կացաւ, պատրաստւեց որ գնայ այգի։ Ճանապարհին աղօթատան մօտովն անցնելիս, միտն ընկաւ, որ օրը կիւրակի է և ամբողջ ժողովուրդը աղօթքի է կանգնած։—Գնամ ես էլ կատարեմ իմ աղօթ-

քը, Աստրծուն փառաբանութիւն տամ. դեռ վաղ է, չեմ ուշանալ ճաշուայ համար հարկաւոր եղածը պատրաստել։

Այծատուրը մտաւ աղօթատուն և երկար մնաց այնտեղ։

Սովդաքարի սիրտը տրըփում էր անհանգստութիւնից. նրա համար մի ժամը տարու չափ երկարանում էր։ Մի երկու ժամից յետոյ շտապեց դէպի այգին, որ տեսնէ իր հրամանը կատարուած է արդեօք։ Այդին մտաւ թէ չէ՝ նրան ցիմ-ցիմ վերցրին այգեպանները և ձգեցին հրաբորբոք հորի մէջ և իսկոյն նորանոր ցախ ու փայտ թափեցին մէջը։ Դեռ հորը չընկած՝ շատ աղաղակեց, թէ ես ձեր տէրն եմ, ձեր աղան եմ, բայց ոչ ոք չլսեց, կարծես ամենքն էլ խլացել ու կուրացել էին։

Այս դէպքից երկու ժամ անցած՝ Այծատուրը գնաց։ Նրան ընդունեցին իրրև իրանց տիրոջը և յայտնեցին, որ նրա հրամանը կատարուած է։—Ի՞նչ հրաման, հարցրեց Այծատուրը և իմացաւ, որ սովդաքարն ընկել է ուրիշի համար փորել տրուած հորը։

Այստեղ հէքիաթաբաններն ասում են, թէ այգեպանների աչքումը Այծատուրն իրանց տիրոջ նման է երևում, իսկ սովդաքարը մի ուրիշի։ Ասում էլ են, թէ ճակտի դրածը չի ջնջուել, և ուրիշի համար հոր փորողը ինքը կընկնի նրա մէջը *։

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

* Ես պատմեցի բոլորովին լսածիս պէս, առանց մի բան աւելացնելու եւ պակասեցնելու, բայց լեզուից. իմ լսածս Ղարաբաղի բարբառով էր։

ՅՈՒՍԱՀԱՏ

Էհ երգիր, սոխակ, երգիր ինձ համար,
Որ այս աշխարհում չունիմ գէթ դադար.
Երգիր, ներշնչիր անբախտիս դու յոյս,
Թող քո դայլայլիկ կարդայ ինձ խրատ-
խոյս...

Ինչպէս մի նաւակ կատաղած ծովում,
Կեանքիս ալեաց հետ կռւում են, կռւում.
Բայց չունիմ ես ոյժ, չունիմ զօրութիւն,
Տանել վիճակուած կեանքիս դառնութիւն...

Դժւար է, դժւար կռւել խաւարում,
Տանել յոյսերի անվերջ խորտակում...
Ահա ինչ է այն, որ կոչւում է «կեանք»՝
«Անվերջ ու անվերջ հոգեկան տանջանք»...

Թող ազատ հնչեն դիւթիչ քո ձայները,
Զարժեն հոգեկան թմրած իմ լարերը.
Դուցէ քո քաղցր, սրտառուչ երգում
Անհուն ցաւերիս գտնեմ մոռացում...

Ն. ԲԱՐԱՓԵԽԵԱՆ

Բագու երկաթուղու կայարան.

ԿՈՅՐ ՆԻԱԳԱԾՈՒՆ



անուկ օրից ուրախ ծնուած,
Իր ծնողաց հատիկ զաւակ.
Նա ապրում էր անհոգ բայւած
Որպէս մի վարդ վառ, անառակ։

Բայց թէ այլ էր անդութ բախտը
Տնօրինել նրա համար,
Դեռափթիթ փափուկ սիրտը
Շըմնաց ուրախ այնպէս երկար։

Երկու աչքով նա կուրացաւ,
Զրկուեց օրւայ պայծառ լոյսից.
Եւ այնուհետ չըլսեցաւ
Մի ուրախ խօսք խեղճի բերնից...

Բայց նա գտաւ մի սերտ ընկեր,
Միշտ կարեկից բոլոր ցաւին.
Այդ քնարն էր որ աճում էր
Թափում վիշտը նա դառնագին։

Նա խփում էր նուրբ լարերին,
Նա երգում էր պողպողջ ձայնով.
Նրա երգն էր, որ լողին,
Լաց էր շարժում մորմոքելով։

Տխուր մի օր կոյր երգիչը,
Նստած տեղից թռաւ յանկարծ.
Շեռքն առաւ իր քնարը
Սկսեց երգել խիստ դառնացած։

«Ես թշուառ եմ աշխարհի մէջ,
Աստուած, թշուառ, անօգնական.
Ես չեմ տեսնում հրաշքներն անվերջ
Հիանալի այս բնութեան.

«Ծնողներից ես վաղ զրկուած
Մեռաւ յետոյ հատիկ քոյրիկ.
Տարէք, տեսնեմ դէմքը պաղած,
Տըէք, ցանեմ չորս դին ծաղիկ...

«Ա՜խ, ես չունիմ ոչ տէր, ոչ տուն
Թափառում եմ օտար շէմքում.
Ես հանգիստ չեմ, չունիմ և քուն,
Մօրս եմ տեսնում միշտ երազում...

«Տըէք լինձ լոյս, մի վառքը լոյս,
Մօրս շիրիմ տեսնեմ գրկեմ.
Տեսնեմ նոյնպէս կիսատ աստղս
Ու այնուհետ հանգիստ մեռնեմ»...

Ածեց, երգեց կոյր երգիչը,
Հեկեկալով ուշաթափուեց.
Ես լսեցի խոր տրտունջը,
Անկեանք աշխարհն նա անիծեց...

ԱՐՍԷՆ ԿՐԱՍԻԼՆԻԿՑԱՆՑ

ԳԻԺ ԷՅԻԱԶԸ

Այդ անունով էր նա յայտնի քաղաքում, թէև իսկապէս նա ոչ գլուխ էր և ոչ խելագար։ Բնութիւնը զրկել էր նրան մտածելու և խորհելու ընդունակութիւնից։ Նա ապուշ էր։ Երկայնահասակ, չոր և վտիտ կազմուածքով 30 կամ 35 տարեկանի մօտ մի մարդ էր նա, կորացած մէջքով և երկար չլուռ ձեռներով, որոնք հասնում էին մինչև նրա ծնկները և ծիծաղաշարժ կերպով տատանւում նրա իւրաքանչիւր մի շարժւածքի ժամանակ։ Նրա երկար չոր ոտները կարծես չըկարողանալով պիմանալ մինչև անգամ նրա վտիտ իրանի ծանրութեան, անդադար երերւում և դողդողում էին։ Ծիծաղաշարժ էր և նրա ահագին գլուխը երկար ալեհառն մազերով և միրուքով։ Նա նմանւում էր բարակ կօթով տանձի և գուցէ հէնց այդ էր պատճառը, որ նա մի րոպէ չէր կարողանում հանդիստ պահել նրան, իր բնականից դուրս բարակ պարանոցի վրայ. նա անընդհատ ոլորւում էր։

Ամհասարակ իր ամբողջ մարմնով նա յիշեցնում էր այն անփորձ լողնորդներին, որոնք առաջին անգամ են ջուր մտնում լողալ սովորելու։ Ամառ թէ ձմեռ նա հագնում էր մինչեւ ոչին լեզգիի կոշտ շալից չուխան, որի գոյնը որոշել անկարելի էր, մանաւանդ որ նրանից միայն մէջքն եւ թեւքերն էին մնացել։ Այդ չուխան յայտնի էր ամբողջ քաղաքում։

—Այդ էյւազի չուխին է նման, ասում էին քաղաքացիք, երբ ուզում էին մի որ եւ իցէ հագուստի չափազանց հնութիւնը եւ անզործադրելի հնութիւնը ցոյց տալ։

Ես չեմ կարող երեւակայել էյւազին առանց նրա չուխայի, նա կարծես նրա գոյութեան մի մասն էր կազմում։

Այդ չուխան նա հագնում էր կապոյտ զարաք շալիկի վրայից։ Գլխին դնում էր ահագին մօթալի փափախ, որ կատարին մնացած մի փունջ բուրդը միայն յայտնում էր, որ նա կարւած է եղել ոչխարի մորթուց, բայց իսկապէս նա յիշեցնում էր գալլաքի սրոցը։ Ես նրան երբէք չեմ տեսած դուլբայ կամ կոշիկ հագած, տարւայ բոլոր եղանակներին նա մահ էր գալիս բոբիկ ոտներով։

Էյւազը մի պառաւ մայր ունէր միայն, որ հայ էր թիֆլում տներում եւ նրանով հայթայթում թէ իր եւ թէ իր միակ զաւակի ապրուստը։ Նա կարճահասակ, խորշոմած դէմքով, կորացած մէջքով եւ չոր ու չլոտ ձեռներով մի կին էր։ Ես նրան յիշում եմ արտասուքը աչքերին, չլոտ ձեռները օդի մէջ շարժելով, անիծելիս այն չարաճճի մանուկներին, որոնք տանջում եւ հալածում էին նրա թշւառ որդուն։ Շատ ժամանակ ես տեսնում էի նրան կորացած մէջքով, կռան տակ մի կտոր հայ բռնած իր որդու ետեւից մահ գալիս։

Էյւազը իր պառաւ մօր հետ բնակւում էր քաղաքի ամենայետնկած փողոցներից մէկում, մի ցած, մութ, խոնաւ սենեակում, նա միայն գիշերներն էր գնում տուն

քնելու, իսկ ամբողջ օրեր անց էր կացնում տնից դուրս, փողոցներում: Նա կերակրւում էր այն հացի փշրանքներով, որ ստանում էր փողոցի մանուկներից կամ այն տներից, որոնց տէրերը աւելել էին տալիս նրան փողոցը կամ ջուր էին կրել տալիս: Նրան կարելի էր հանդիպել ամեն տեղ, թէ քաղաքի ամենաբազմամարդ փողոցներում և թէ ամենահեղտոտ թաղերում: Նա սիրում էր պտտել և դաշտերը: Շատ ժամանակ կարելի էր տեսնել նրան քաղաքից դուրս մի բլրակի վրայ, ուր ամբողջ ժամեր նա անցուցանում էր երեսի վրայ պառկած, մատներով գետինը փորելիս: Բայց ամենից աւել, ուր նա սիրում էր անցկացնել օրւայ մեծ մասը, էր մեր ուսումնարանի բակը: Ես մինչև այսօր չեմ կարող բացատրել, թէ ինչն էր ստիպում նրան ամբողջ ժամեր անցկացնել այստեղ, մինչդեռ նրա ամենակատաղի հալածողներն ուսումնարանի աշակերտներն էին: Ամեն առաւօտ, տանից դուրս գալով, նա ուղղակի գալիս էր ուսումնարանի բակը: Առաւօտները դասատուն դնալիս մենք տեսնում էինք նրան ուսումնարանի դռան մօտ մի քարի վրայ նստած: Նա հեռանում էր այնտեղից, երբ դասերը վերջանում և աշակերտները ցրւում էին իրանց տները: Ծիծաղալի էր նրա դիրքը, երբ գլուխը օրօրելով, նա իր ապուշի ժպիտով ժպտում էր իւրաքանչիւր մի դրանից մտնող աշակերտին. կարծես մեծ զարմուհթիւն և բաւականութիւն էր պատճառում նրան, եթէ աշակերտը դասից յետ չէր ընկնում, այլ ժամանակին յաճախում էր ուսումնարան. ինչ էր ուզում յայտնել նա իր այդ ժպիտով, այդ ոչ ոք չէր կարող բացատրել:

Նա չէր կարողանում իր միտքը բառերով արտայայտել. ամբողջ նրա բառարանը կազմում էին մի քանի անիմաստ հնչիւններ: Ուսումնարանի աշակերտները սովորցրել էին նրան մի քանի հնչիւններ իրանց այբբենարանից՝ այբ, ժէ, ճէ, ռա: Այդ հնչիւններով էր միայն նա ար-

տայայտում իր միտքը, իր հոգեկան ուրախ թէ տխուր տրամադրութիւնը, իր ցաւն ու վիշտը: Սակայն այդ հընչիւններին ևս նա տւել էր իրան յատուկ այնպիսի մի առոգանութիւն, որ աւելի նմանւում էր կովի բառանչելուն: Ձատ ժամանակ դասատան նստած մենք լսում էինք ուսումնարանի բակից մեզ շատ լաւ ծանօթ ձայնը՝ այբ, ժէ, ճէ, ռա. այդ նշանակում էր, որ չարաճճի աշակերտներից մէկը կամ ծեծել և կամ որ և իցէ քաղցրաւենիք էր ընծայել նրան: Երբեմն լայն անիմաստ ժպիտը դէմքին նա յանկարծ նկատւում էր մեր դասատան պատուհանի առաջ այն ժամանակ, երբ մենք դասով էինք պարապում և գլուխն օրօրելով՝ կրկնում էր այբ, ժէ, ճէ, ռա: Մենք ծիծաղում էինք, ուսուցիչը բարկանում և ուղարկում էր ծառային փախցնելու նրան: Սակայն մի քանի րոպէից յետոյ նա կրկին յայտնւում էր պատուհանի առաջ մի և նոյն ժպիտը դէմքին և մի և նոյն հնչիւնները կրկնելով: Զարմանալի համակրութիւն էր տածում նա դէպի աշակերտները. իրան յատուկ հեղութեամբ և մոռացկոտութեամբ նա ներում էր նրանց յանցանքները և բոլոր այն տանջանքները, որոնց նրանք ենթարկում էին նրան: Եւ ինչ տանջանքներ չէինք տալիս նրան:

Դասամիջոցներին մենք շրջապատում էինք նրան:

—Էյւազ, մեզ համար մի երգ ասա, դոռում էինք մենք:

Նա սկսում էր՝ այբ, ժէ, ճէ, ռա:

Իսկ այդ միջոցին մենք մանր քարեր էինք լցնում նրա բերանը կամ աչքերին մոխիր ցանում: Նա աչքերը խուփ, բերանը բաց, ծիծաղաշարժ կերպով ոստոստելով իր ծուռ ոտների վրայ, բոլոր ոյժով սկսում էր դոռալ՝ այբ, ժէ, ճէ, ռա:

Մենք ծիծաղից թուլանում էինք:

Բայց աւելի ծիծաղաշարժ էր, երբ աշակերտներից

մէկը ետևից յանկարծ թռչելով նրա ուսերը սկսում էր քաշել նրա միրուքից, նա կրունկների վրայ պտրտելով դառնում էր դէպի յետ, բայց այդ միջոցին մի ուրիշը խփում էր նրա սլարանոցին կամ հրում էր ետևից, նա դառնում էր այն կողմը, մինչդեռ երրորդը կսմթում էր նրա թևից և այդպէս մենք ստիպում էինք նրան ծիծաղաշարժ պտոյտները կատմել, որ և անսահման հրճւանք էր պատճառում մեզ։ Շատ անգամ նրա թոյլ ոտները չը կարողանալով դիմանալ այդ պտոյտներին՝ շուտ հոգնում էին և նա հաւասարակշռութիւնը կորցնելով՝ ամբողջ մարմնով երեսի կամ քամակի վրայ փռւում էր գետին։ Որովհետև ձեռներով օդի մէջ զանազան խեղկատակ ձևեր գծելով նա աշխատում էր բարձրանալ իր տեղից, բայց մենք ամեն կողմից հրելով՝ ստիպում էինք նրան անշարժ մնալ ընկած տեղը։ Աղօրմագին ձայնով նա բացագանչում էր՝ այը, ժէ, ճէ, ռա. իսկ այդ աւելի էր գրգռում մեր ծիծաղը։ Մենք խնդում էինք, տեսնելով նրա ծիծաղաշարժ փորձերը, որոնք նա զորձ էր դնում մեր ձեռքից ազատւելու համար։ Եւ այդ տևում էր այնքան ժամանակ, մինչև որ կամ ուսումնարանի զանգն էր հրաւիրում մեզ դասատուն և կամ ուսուցիչներից մէկը նկատելով՝ ազատում էր նրան մեր ձեռքից։

Անբացատրելի սարսափ էր պատճառում նրան լուցկի տեսքը։ Նրա դէմքը և նայւածքը գունդկ էր առհասարակ որ և իցէ արտայայտութիւնից, սակայն այն դէպքերում, երբ նա լուցկի էր տեսնում, անսահման սարսափ և երկիւղ էր նկատւում նրա աչքերի մէջ։

Մենք շատ անգամ օգտւում էինք նրա այդ թուլութիւնից։ Մենք փոքր էինք և չէինք կարող երևակայել մեր անգթութեան չափը։ Նախապէս մի-մի լուցկի բռնելով մեր ձեռքում, մենք կանչում էինք նրան մեզ մօտ և, շրջապատելով նրան, յանկարծ միանւագ վառում էինք

լուցկինները։ Խեղճ Էյւազ. ես չեմ կարող մոռանալ այն անհուն սարսափը, որ այդ րոպէին նկատուում էր նրա դէմքի վրայ և աչքերի մէջ։ Սարսափահար, երեսը ձեռներով ծածկած, ամբողջ մարմնով դողալով, նա մոռանում էր մինչև անգամ իր այբ, ժէ, ճէ, ռան և սրտաճմլիկ կերպով սկսում էր բառաչել։ Այդ աւելի էր գրգռում մեզ և մենք ոստկացնում էինք մեր անգթութիւնը, անդադար լուցկիներ վառելով և դէմ անելով նրան։ Ես առանց սարսափի չեմ կարող յիշել, ինչպէս մի անգամ վառած լուցկին դէմ անելով նրա դէմքին, խանձեցինք նրա մի-րուքը. նա այնպիսի մի սրտաճմլիկ աղաղակ բարձրացրեց, որ ամենքս սարսափահար եղանք։ Երբ ես երբեմն սպանպանոցում խողխողուող տաւարի բառաչն եմ լսում, յիշում եմ միշտ Էյւազի ողորմագին ձայնը։

Մենք անգութ էինք։

Ես երբէք չեմ կարող մոռանալ, ինչպէս մի օր կատարեալ պժոխայինն տանջանքի ենթարկեցինք նրան։

Գաւերը վերջացրել էինք։ Էյւազը իր սովորութեան համեմատ, ոտքերը չռած, մէջքի վրայ ընկած ուսումնարանի բակում, տաքանում էր արեգակի ճառագայթների տակ, քթի տակին մրթմրթալով՝ այբ, ժէ, ճէ, ռա։ Փիծաղելի էր այդ րոպէին նա իր պիրքով ոտքերը բարձրացրած, մէջքի վրայ ընկած, միրուքը տմտմբացնելով նա աւելի նմանուում էր թոզի մէջ թաւալուող բարակի։ Մենք մտածեցինք մի լաւ օյնի խաղալ նրա գլխին։ Ընկերներից մէկը առաջարկեց նրա միրքի տակ սաղկալ-շէյթանի (մրքի սատանայ) դնել։ Մենք ուրախութեամբ համաձայնեցինք, գդալով, թէ ինչքան ծիծաղ պիտի պատճառէր այդ մեզ։ Սաղկալ-շէյթանին մի վոքրիկ մեքենայ է, որ խճճում և հուպ է բերում միրուքը։ Նա մի վերշոկ երկայնութիւն ունեցող ճկուն բարակ ճիպոտ է, որին աղեղի ձև են տալիս։ Այդ աղեղի ծայրերին անցնում են թէլի

օղակ, իսկ օղակի մէջ մի բարակ փոքրիկ ամուր փայտի կտոր կամ մի փոքրիկ մեխ դնելով, սկսում են պտըտացնել մինչև որ թելի օղակը ամուր ոլորուում է։ Այնուհետև բաց թողնելով փոքրիկ փայտը նա արագապէս սկսում է պտըտել, բաց անելով թելի ոլորը և մի և նոյն ժամանակ պտտացնելով իրա հետ և փոքրիկ աղեղը։ Պըտըտելու ժամանակ, եթէ աղեղը կպչում է որ և իցէ բրդի, բամբակի, կամ մազի գործւածքի, պտտեցնում է նրան և իր հետ և խճճում։ Իսկ եթէ այդ աղեղը բաց է թողնւում մրքի տակ, այն ժամանակ նա փաթաթում է իր վրայ մրքի մազերը, խճճում և հաւաքում է նրան, անտանելի ցաւ պատճառելով։ Ազատել մազերը այդ մեքենայից կարելի է միայն նրանց ածիլելով։ Չինելով այդպիսի մի մեքենայ մենք կամաց-կամաց մօտեցանք էլւազին և յանկարծ բաց թողինք նրա մրքի տակ (ամօթով պիտի խոստովանեմ, որ այդ անգութ քաջագործութիւն գործողը ես էի)։ Մի ակնթարթում նրա միրուքը կծկւելով դէմ դառաւ ծնօտին և քաղելով ներքևի շրթունքը, բաց արաւ նրա ատամները։ Սրտաճմլիկ աղաղակներ արձակելով նա վեր թռաւ իր տեղից և մէջքը կորացրած այն ձևով, որպէս թէ մէկը առաջից քաշելիս լինէր նրա մրքից, սկսեց փախչել։ Ուրախութեան ձայներ արձակելով մենք ևս վազեցինք նրա ետևից, ծիծաղելով նրա խեղկատակ ոստոստիւնների վրայ։ Միւս օրը նա երևաց ուսումնարանի բակում մրրուքը ածիլած։ Մենք սկսեցինք ծիծաղել, մեզ հետ նա ինքը ևս սկսեց ծիծաղել։

Տարւայ եղանակներից ամենից անտանելին էլւազի համար ձմեռն էր։

Ինչ տանջանքներ ասես մենք չէինք տալիս նրան այդ ժամանակ։

Մենք թաղում էինք նրան ձիւնի մէջ, նրա փափախն ու ծոցերը լցնում էինք ձիւնով։ Մենք հալածում էինք

նրան ձիւնի դնտակներով, երբեմն այդ դնտակների մէջ քարի կտորներ դնելով և աշխատելով հարուածել նրա մարմնի բաց տեղերը, որից շատ ժամանակ արնում էին նրա երեսը, ձեռներն ու ոտները։ Մենք ծիծաղում էինք, երբ նա արիւնաթաթախ, ձիւնի մէջ թաւալելով, աշխատում էր փախս տալ մեզանից իր անհաստատ քայլերով։

Երբ ես վերածնում եմ իմ յիշողութեանս մէջ մանկութեանս օրերը, սարսափում եմ, տեսնելով, թէ ինչքան մենք անգութ էինք փոքր ժամանակներս։

Մի օր հապիւ ես Էյւազի մահւան պատճառը չըդարձայ, թէև այդ հանգամանքի շնորհիւ մենք բարեկամացանք իրար հետ։

Ես հանդիպեցի նրան փողոցում այն ժամանակ, երբ շունս ետևիցս դցած գնում էի զբօսնելու։ Մտածելով մի խաղ խաղալ նրա գլխին, ես հրամայեցի իմ շանս յարձակուել նրա վրայ. բարձր հաչիւնով վազեց նրա վրայ և բռնեց իր սուր ատամներով նրա մերկ ոտքից։ Սարսափահար, որտեղ մլիկ աղաղակներ արձակելով, նա ուզեց փախչել, բայց վաթսաթուելով շանը գլխակոր գետին թաւալեց։ Նրա գլուխը սաստկութեամբ կպաւ փողոցի քարին, պատռուեց և արիւնը աղբիւրի նման սկսեց ցայտել նրա վէրքից։ Անգթացած՝ մնաց փուած գետնի վրայ։ Ես մօտեցայ նրան, կարծելով, որ նա խորամանկութիւն է ուզում բանացնել։ Նրա աչքերը փակ էին, մեռելային դէմքի վրայ անսահման սարսափ և երկիւղ էր նկարուած։ Սարսափը պատեց և ինձ։ Վախենալով, որ մի դուցէ նա մեռած լինի, ես սկսայ փախչել։ Հասնելով տուն, ես հասկացայ իմ յանցանքիս մեծութիւնը և խիղճս սկսեց չարաչար տանջել ինձ։ Ես համոզուած էի, որ նա մեռած է և նրա մահւան պատճառը ես եմ եղած։ Ես ինձ մարդասպան էի համարում և կարծում էի թէ ամբողջ աշխարհը ևս մեղադրում է ինձ Էյւազի մահւան մասին։ Ինձ թուում

էր թէ ինձ շրջապատողները դիտեն, որ Իլյուշին ես եմ սպանել և ամենքը ատում են ինձ, մարդասպան համարելով։ Ամբողջ դիշեր իմ անկողնիս մէջ տանջելով խղճի խայթից, ես լինդրում էի Աստուածանից, որ նա երկարէ Իլյուշի կեանքը և խոստանում էի երբէք, երբէք իմ կեանքումս մի ծանր խօսք անգամ չասել նրան։ Ես չէի կարողանում քնել. իմ աչքիս առաջ նկատւում էր Իլյուշը անզգայ գետին վռւաձ, արիւնաթաթախ մեռելայլին դէմքով, որի վրայ սարսափ և երկիւղ էր նկարւաձ։

Միւս օրը սրտատրոփ դնացի ուսումնարան, բայց Իլյուշին չըտեսայ։ Սիրտս ճմըլւում և խղճիս խայթը տանջում էր ինձ անդադար։ Ինձ թւում էր թէ իմ ընկերներս մի տեսակ կասկածանքով են նայում ինձ. նրանք ինձ մարդասպան են համարում և այդ աւելի էր տանջում ինձ։ Ես չէի համարձակում տեղեկութիւն հարցնել նրանցից Իլյուշի մասին, որպէս զի նրանք չկարողանային նկատել իմ շփոթութիւնս։ Ամբողջ օր ու դիշեր ես ինձ կորցրածի նման էի...

Հետևեալ օրը ես տեսայ Իլյուշին ուսումնարանի բակում, գլուխը մի ահագին կեղտոտ շորով փաթաթած։ Ուրախութիւնից ես սկսեցի լաց լինել։ Ընկերները ծիծաղեցին, տեսնելով նրան այդ նոր դրութեան մէջ, իսկ ես յարմար առիթ դտնելով, մօտեցայ և տվի նրան իմ ձեռքս եղած հացն ու մրգեղէնը։ Նա ընդունեց իր մշտական ժպիտով և շնորհակալութիւն յայտնեց, արտասանելով այբ, ժէ, ճէ, ուա։ Այդ օրից մենք բարեկամացանք իրար հետ։ Ես ամեն օր նրան հաց, պանիր և մրգեղէն էի տալիս և աշխատում էի մինչև անգամ պաշտպանել նրան իմ կարողութեանս չափ ուրիշների հալածանքից։ Շատ ժամանակ ես տանում էի նրան մեր տուն, ուր մայրս կերակրում էր նրան, ստիպելով կատարել անային մանր մունր ծառայութիւնները, ինչպէս բակը աւրել, հօրից ջուր

քաշել, բակի անմաքրութիւնը մաքրել Լայլն, որոնք նա կատարում էր ամենայն պատրաստակամութեամբ:

Յաճախելով մի շատ մեր տուն, նա ընտելացել էր մեր ընտանիքի բոլոր անդամների հետ: Առհասարակ մի տեսակ յարդանքով և սիրով էր վերաբերւում նա դէպի մեզ: Զարմանալի կերպով նա սիրում էր փոքրիկ մանուկներին: Ինձ ունէի մի փոքրիկ մի տարեկան եղբայր Տիգրան անունով. իրան յատուկ արտասանութեամբ Էյւազը կրճատել էր նրա անունը և անւանում էր նրան միայն Տա: Նա իրան ամենաերջանիկ մարդն էր համարում, երբ մայրս յանձնում էր նրան երեխային պահելու: Ամենայն զգուշութեամբ, ինչքան կարելի էր սպասել նրանից, նա գրկում էր նրան և պատրաստ էր ամբողջ ժամերով արձանացած կանգնել մի և նոյն տեղը, միայն թէ մանուկը նրա գրկումը լինէր: Անհուն երջանկութիւն էր պատճառում նրան երեխայի թոթովանքը: Այդ րոպէներին նրա դէմքը լուսաւորւում էր մի տեսակ ապուշներին յատուկ երջանիկ ժպիտով և նա մեղմօրէն շշնջում էր՝ այբ, ժէ, ճէ, ռա:

Շատ ժամանակ պատահում էր, երբ նա դալիս երեխային տանը չէր գտնում: Ձէքելով որոնում էր նրան ամեն տեղ, անդադար կրկնելով Տա, Տա:

—Տանը չէ, Էյւազ, ասում էինք մենք:

Տխուր և տրտում դուրս էր դալիս և վողոցի դռանը կանգնած ոսկսում, մինչև երեխային կրբերէին տուն: Փիճաղելի էր այդ ժամանակ տեսնել նրան: Հեռուից նկատելով երեխային ծառայի գրկում, նա ամենից առաջ վազում էր մեր մօտ և կրկնում Տա, Տա. այդ նշանակում էր, որ երեխային բերում են. յետոյ շուտափոյթ վազելով դուրս ծառայի առաջ, սկսկում էր ոստոստալ նրա շուրջը, ժպիտը դէմքին անդադար կրկնելով Տա, Տա:

Խղճալի էր նրա դրութիւնը, երբ փոքրիկ եղբայրս

Հիւանդանում էր։ Ամբողջ ժամերով կանգնած դռան, նա ողոքմելի ձայնով յայտնում էր անցնող դարձողին Տա, Տա, այսինքն երեխան Հիւանդ է։ Անկարելի է նկարագրել և նրա ուրախութիւնը, երբ առաջի անգամ հիւանդութիւնից յետոյ դուրս էլին բերում երեխային։ Ուրախութիւնից նա չէր իմանում ինչ անէր. նա ոստոտում, թըռչկոտում էր և մինչև անգամ, մոռանալով իր սարսափը դէպի իմ շունը, գրկում, համբուրում էր նրան, անդադար կրկնելով Տա, Տա. այբ, ժէ, ճէ, ռա։

Խեղճ Էյլազ. նա հէնց ինքը և ու մի մանուկ էր և դուցէ այդ էր պատճառը, որ այնքան սիրում էր մանուկներին։ Իր այդ սիրոյն և ու նա զոհ գնաց։

Ես երբէք չեմ մոռանալ այն օրը, այն սարսափելի դիշերը։ Ես քնած էի. սոսկալի աղմուկը ինձ արթնացրեց։ Սենեակս լիքն էր ծխով. կրակի լեզուակները ներս թափանցելով պատուհանից, լափում էլին սենեակի կահ կարասիքը։ Ես հազիւ կարողացայ դուրս փախչել սենեակից. Հայրս գիշերայլին հագուստով գրկեց ինձ և ներքև վազեց սանդուխներից, որոնք արդէն սկսել էին բռնկել։ Մեր տունը կրակի մէջ էր։ Ես վազեցի փողոց, ուր ժողոված բազմութիւնը գոռում, գոչում, աղաղակում էր։ Բազմութեան մէջ ես նկատեցի մօրս, որ հերարձակ խելագարի նման գոռում էր՝ «Տիգրանս, Տիգրանս տանն է, աղատեցէք նրան»։ Փոքրիկ եղբայրս մնացել էր այրուող տանը. բազմութեան միջից ոչ ոք սիրտ չէր անում մտնել բոցավառ տունը։ Մայրս աշխատում էր առաջ անցնել. նա սրտաճմլիկ կերպով կրկնում էր, Տիգրանս, Տիգրանս. բայց ժողվել չէին տալիս նրան առաջ գնալու։

Տա, Տա, լսեցի ես այս բոպէին մի աղերսագին ձայն բազմութեան մէջ և տեսայ Էյլազին։ Խելագարի նման մի ակնթարթում նա վազեց բարձրացաւ այրուող սանդուխներից և անյայտացաւ բոցերի մէջ. այդ այնքան շուտ կա-

տարւեց, որ ոչ ոք չըկարողացաւ սրգելել նրան։ Մենք կարծեցինք թէ նա կորաւ։ Սակայն մի քանի վայրկեանից յետոյ բոցերի միջից նա երևեցաւ սանդուխի վրայ, գրկին բռնած եղբօրս։ Նրա շապիկը և վարտիկը բռնկած էին, մերուքն ու մազերը այրւում էին, բայց նա աշխատում էր հեռու պահել իրանից երեխային, որ մի գուցէ նա էս բռնկէը իրա կրակով։ Մի վայրկեան միայն նա կանգնեց սանդուխի վրայ, կարծես շունչ առնելու։ Ես երբէք չեմ մոռանալ նրա դէմքը. բոցով շրջապատւած, որ լիզում էր նրա մերկ ոտները, ձեռները, երեսը, պարանոցը, նա վեհ, սքանչելի, զեղեցիկ էր երևում այդ րոպէին։ Զրկիտեմ ինչու մի և նոյն վայրկեանին ես յիշեցի թէ ինչպէս անգութ էի վարւում նրա հետ և սկսեցի դառն կերպով լաց լինել։ Ես նկատեցի, թէ ինչպէս նա դողդողաց սանդխի վրայ և քիչ մնաց, որ ընկնի, սակայն զերբնական ոյժով վերջին ճիգն էս գործ դնելով նա մի քանի աստիճան ներքև իջաւ սանդուխից։ Մենք լսեցինք նրա ուրախ ձայնը՝ Տա, Տա, այբ, ժէ, ճէ, ռա, և այնուհետև անզդայացած նա գետին գլորւեց։ Մի քանի մարդիկ վազեցին առաջ և առան նրանից երեխային, որի շորերը սկսել էր արդէն վառւել։ Էլիազին գրկած դուրս բերին փողոց և գրին կապերտի վրայ։ Օգնել նրան անկարելի էր. նրա ոտքերը, ձեռները և կուրծքը արդէն այրւած և սևացած էին։ Մենք մօտեցանք նրան։

—Խեղճ Էլիազ, շշնջաց մայրս արտասւագին, դու զոհեցիր քեզ իմ զաւակիս փրկութեան համար։

—Տա, Տա, շշնջաց նա։

Մայրս մօտեցրեց նրան երեխային։ Նա մի վայրկեան բացեց իր աչքերը. ուրախութեամբ փայլեց նրա նայւածքը, տեսնելով փրկւած երեխային։

—Այբ, ժէ, ճէ, ռա, արտասանեց նա հազիւ լսելի ձայնով և աւանդեց հոգին։

Ա. ՋԱԽԱՐԵԱՆՑ

*
* *

Է անցել կեանքիս քսաներեք տարին՝
Ես արդէն ծեր եմ, ծեր բոլորովին։
Ո՞ւր է իմ եռանդ, վարդագոյն յոյսեր,
Ո՞ւր իմ ցնորքներ, վառ զգացմունքներ,
Ո՞ւր իմ ապրելու ուժգին ցանկութիւն,
Ո՞ւր մատաղ կեանքի հրապոյրը անհուն...
—Ո՜հ, չկան այլ ևս, մարել են նոքա։
Թևերս կտրած ընկած եմ ահա.
Եւ որպէս ծերուկ, վախճանին հասած,
Անյոյս, ուժասպառ, հիասթափ, ջարդուած,
Նսյում եմ յետև, ապրում անցեալով,
Առաջիս վնտռում հանգիստ անվրդով...

Մխթէ, Տէր-Աստուած, իմ այս դրութիւն
Չէ րոպէական անցող թուլութիւն։
Մխթէ յիրաւի դեռ ևս չապրած՝
Ես պիտի լինեմ կենդանի մեռած...
Մխթէ իմ սիրտը, վաղաժամ մարած,
Իր խոր խորքերում չի պահել մի կայծ,
Որ բռնկելով վառէր իմ հոգին,
Ցետ տար ինձ նորից ոյժերս նախկին.—
Այո, կուզէի նորից ոյժ առնել,
Նորից թև առած ուրախ սաւառնել
Աշխարհի վրայ, եթերքում ազատ,
Որպէս մի առնիւ ուժեղ և հպարտ...

Ք. ԹՈՊՉԻՈՍԵԱՆ

Ձիրակ գաւառի հեթանոսներից.

ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐ

(Վ. Կորոլենկոյի)

ԴԼՈՒԽ Ե.

ԽԱՂԱՑԻԿԻՆ.

Տարզ օրերը անցան և Վարուհան պարձեալ Հիւանդացաւ։ Իր բոլոր զբաղեցնելու նպատակով եղած խորամանկութիւններն վրայ նա առնատուրեամբ էր նայում իր մեծ, մթնացած և անշարժ աչքերով և մենք վազուց ի վեր չէինք լսում նրա ձիծաղը։ Ես սկսեցի տանել իմ բոլոր խաղալիքները ստորերկրեայ բնակութեան մէջ, բայց նրանք շատ կարճ ժամանակ էին նրան զբաղեցնում։ Այն ժամանակ ես վճռեցի պառնալ իմ քոյր Սոֆիային։

Սոֆիան ունէր մի մեծ խաղատիկլին մոյզ զոյնով ներկած գէմքով և վառահեղ վշեայ մազերով, որ իր Հանգուցեալ մայրն էր ընծայել նրան։ Ես այդ խաղատիկլնի վրայ մեծ յոյսեր ունէի, ուսոի կանչելով քրոջս այդու կողմնակի ճեմելիքը, խնդրեցի տալ այն առ ժամանակ ինձ։ Ես այն աստիճան թախանձանօք խնդրեցի նրա հա-

մար, այն աստիճան կենդանի նկարագրեցի Հեղճ Հիւանդոտ աղջկան, որը չունէր իր խաղալիքները, որ Սօֆիան, որը սկզբից մինչև վերջ մնում էր խաղատիկինը դէպ իրան, տւեց ինձ և խոստացաւ երկու-երեք օր ուրիշ-ուրիշ խաղալիքներով զբաղեցնել:

Այս կաւեղէն պճնազարդ օրիորդը մեր Հիւանդի վրայ անսպասելի մեծ ներգործութիւն ունեցաւ:

Մարուսեան, որ թառամում էր, ինչպէս աշնան ծաղիկը, կարծէք դարձեալ կենդանացաւ: Նա այն աստիճան ամուր դգում էր ինձ, այնպէս սիրուն ծիծաղում էր, խօսելով իր նոր բարեկամուհու հետ... Փոքրիկ խաղատիկինը գրեթէ մի հրաշք դործեց: Մարուսեան, որ վաղուց ի վեր չէր վեր կենում անկողնից, սկսեց մանգալ, հետը վերցնելով իր շիկահեր աղջկան, և երբեմն մինչև անդամ վազվզում էր, առաջւայ նման յատակի վրայ թաւալելով իր թոյլ ոտներով:

Բայց ինձ այն խաղատիկինը շատ սարսափելի րոպէների արժանացրեց: Նախ և առաջ, երբ ես հետս տանում էի սարի գլուխը, ճանապարհին ինձ պատահեց ծեր Եանուշը, որ երկար ժամանակ գլուխը շարժելով նայում էր ինձ:

Յետոյ, երկու օր անցած, պառաւ նաժիշտը նկատեց, որ մի բան կորել է և սկսեց այս ու այն անկիւնն ընկնել, ամենայն տեղ էլ որոնելով խաղատիկինը: Սօֆիան աշխատում էր Հանդարտեցնել նրան, բայց իր պարզամտութեամբ հաւատացնելովը, որ իրան խաղատիկին Հարկաւոր չէ, որ խաղատիկինը գնացել է պրօնելու և շուտով կվերադառնայ, միմիայն աղախիններին տարակուսացնում էր և կասկած առաջ բերում, որ այն հասարակ կորուստ չէ ևայլն: Հայրս դեռ ոչինչ չըգիտէր, բայց դարձեալ գալիս էր նրա մօտ Եանուշը, որին այս անդամ աւելի խիստ չարացած վռնդեց: Սակայն, մի և նոյն օրը, Հայրս այգու դռան

մօտ կանգնացրեց և հրամայեց մնալ տանը։ Միւս օրը մի և նոյնը կրկնուեց և միայն չորս օրից յետոյ, հօրս քնած ժամանակ ես վազ վեր կացայ և ցանկապատից փախա դուրս։

Սարի վրայ գործը շատ վատ էր դնում։ Պարուսեան դարձեալ պարկել էր և աւելի հիւանդացել։ Նրա դէմքը օտարոտի կերպարանք էր ստացել. շէկ մազերը փրուել էին բարձի վրայ։ Նա ոչոքին չէր կարողանում ճանաչել։ Նրա մօտ միայն պառկած էր նաև չարաբաստ վարդագոյն այտերով և լիմար փայլուն աչքերով խազատիկինը։

Ես հաղորդեցի Վալէկին իմ երկիւղս և մենք միասին վճռեցինք, որ խազատիկինը անհրաժեշտ պէտք է վերադարձնել տիրոջը, մանաւանդ որ Պարուսեան այդ չի էլ նկատիլ։ Բայց մենք սխալւեցանք։ Չէնց որ ես խազատիկինը աղատեցի բոլորովին մոռացուելեան տրւած աղջկայ ձեռքից, նա բացեց աչքերը, մի տեսակ հայեացք ձգեց, կարծէք չընկատելով ինձ, չըխօստովանւելով, թէ ինչ է պատահում իրան և յանկարծ կամաց-կամաց լաց եղաւ և այնքան խղճալի, իսկ նրա նիհար դէմքի վրայ զառանցանքի ներքոյ, արտայայտւեց այնտեսակ խորխմաստ մի վիշտ, որ ես իսկոյն հէնց բոլորովին վախեցայ՝ խազատիկինը դրի իր տեղը։ Աղջիկը ժպտաց, խազատիկինը սեղմեց դէպ իրան և հանգստացաւ։ Ես հասկացայ, որ կամենում էի գրկել իմ փոքր բարեկամիս նրա կեանքի կարճ օրերում առաջին և վերջին ուրախութիւնից։

Վալէկը երկչոտութեամբ նայեց ինձ վրայ։

—Ինչ պէտք է անենք այժմ, հարցրեց նա տխուր։

Տիրուրցը տխուր նստած տախտի վրայ և գլուխը կորացրած, նոյնպէս նայում էր ինձ վրայ մի տեսակ հարցական հայեացքով։ Այդ պատճառով ես աշխատում էի ինձ կարելոյն չափ անհոգ ձևացնել և ասացի.

—Ոչինչ, նաժիշտը, երևի, արդէն մոռացել է դրա մասին։

Բայց պառաւ կինը չէր մոռացել։ Երբ այս անգամ վերադառնում էի տուն, այգու դռների մօտ դարձեալ պատահեց ինձ Եանուշը։ Սօնիային ես պատահեցի տանը արտասուալի աչքերով, իսկ նաժիշտը ձգում էր ինձ վրայ մի սարսափելի հայհոյք, և մի ինչ որ մրթմրթում էր իր անատամ բերանով։

Հայրս հարցրեց ինձ, թէ ուր էի ես և ուռանալով սովորական պատասխանը, բաւականացաւ միայն նրանով, որ կրկնեց միայն իր հրամանը՝ որ երբէք առանց իր հրամանի չըհեռանամ տանից։ Հրամանը վճռական էր։ Չը լսել նրան ես չէի համարձակիլ և նոյնպէս չէի կարող խնդրել։

Անցաւ չորս օր։ Ես տխուր զբօսնում էի և մի տեսակ վշտով նայում էի սարի վրայ, բացի դրանից, սպասում էի մի աղէտքի որ պիտի գար իմ գլխին։ Ինչ կըլինէր ես չըգիտէի, բայց սիրտս շատ ծանր էր։ Ինձ կեանքումս ոչ մէկը դեռ չէր պատժել։ Հայրս էլ ոչ միայն չէր ձեռք տալիս ինձ, այլ և նրանից ես չեմ լսել ոչ մի վիրաւորիչ խօսք։

Այժմ ինձ տանջում էր մի ծանր նախազգայուլթիւն։

Վերջապէս, ինձ կանչեցին Հօրս մօտ, նրա առանձնասենեակը։ Ես ներս մտայ և երկչոտութեամբ կանգնեցի դռան մօտ։ Լուսամուտից լաւ փանջում էր աշնանային տիրադին արեգակը։ Հայրս նստած էր իր բազկաթոռի վրայ, մօրս պատկերի առաջ և յետ անգամ չէր նայում։ Ես լսում էի սրտիս անհանգիստ բաբախումը։

Բայց ահա նա յետ նայեց։ Ես բարձրացրի աչքերս և իսկոյն դարձեալ գետին ձգեցի. Հօրս դէմքը ինձ սարսափելի թուեց։ Անցաւ մի կէս րոպէ և այդ ժամանակամիջոցում ինձ վրայ մի ծանր հայհոյք ձգեց։

—Դու ես վերցրել քրոջդ խաղատիկինը։

Այս խօսքերը այնպէս ազդեցին ինձ վրայ, որ ես ցնցուեցի։

— Այո՛, պատասխանեցի ցած ձայնով։

—Դու գիտե՞ս, որ նա մօրդ ընծան է, որ դու լաւ պէտք է պահես, ինչպէս սուրբը... Դու գողացե՞լ ես։

— Ո՛չ։ ասացի ես, բարձրացնելով գլուխս։

—Ինչպէս թէ ոչ, աղաղակեց յանկարծ Հայրս, դէն ձգելով բազկաթոռը—Դու գողացել ես և տարել։ Ո՞ւմ համար ես տարել... Աւա՛։

Նա արագ մօտեցաւ ինձ և իր ծանր ձեռքը դրեց ուսիս վրայ։ Ես գժւարութեամբ բարձրացրի գլուխս և նայեցի վեր։ Հօրս դէմքը դեղնել էր։ Ես բոլորովին կծկըւում էի։

Հայրս գժւարութեամբ էր շունչ քաշում։ Ես աւելի ևս կծկւում էի։ Գառն արտասուքը այրում էր իմ այտերը։ Ես սպասում էի...

—Էհէ՛, բարձրացաւ յանկարծ բայց լուսամուտի կողմից Տիբուրցու սուր ձայնը։—Ես տեսնում եմ, շարունակեց Տիբուրցը, նեղս մտնելով երկու-երեք վայրկեանից յետոյ սենեակը,—տեսնում եմ իմ երիտասարդ բարեկամին շատ նեղ դրութեան մէջ։

Հայրս պատահեց նրան սպառնացող հայեացքով, բայց Տիբուրցը կարողացաւ դիմանալ։ Նա շատ լուրջ էր, չէր ծռմռւում, նրա աչքերը մի տեսակ վշտով էին նայում։

—Պան դատաւո՛ր, ասաց նա փափուկ ձայնով, դուք խղճմտանքով մարդ էք... Արձակեցէք երեխային։ Տեսնում է Աստուած, որ նա մի վատ բան չէ արել և եթէ նրա սիրտը քաշում է դէպի իմ պատառոտած թշւառները, երկնում եմ Սուրբ Աստուածածնով, աւելի լաւ է հրամայեցէք կախելու ինձ, բայց ես չեմ թոյլ տալ, որ երեխան պատժւի սրա համար։ Ահա՛ քո խաղատիկինը, սիրելի՛ս...

Նա բաց արաւ մի կապոց և հանեց այնտեղից խաղատիկինը։

Հօրս ձեռքը, որ բռնած ունէր ուսս, թուլացաւ։ Դէմքի վրայ զարմանք էր արտայայտւում։

— Այս ինչ է նշանակում, հարցրեց նա վերջապէս։

—Արձակեցէք մանուկին, կրկնեց Տիբուրցը, և նրա մեծ ձեռքը սիրով վազաքշում էր իմ կորացած գլուխը։ Դուք նրանից ոչինչ չէք ստանալ սպառնալիքներով, բայց և այնպէս սիրով կըզատմեմ բոլորը, ինչ որ միայն կամենում էք լսանալ... Դուրս գնանք միւս սենեակը, պան դատաւոր։

Ես դեռ էլի կանգնած էի մի և նոյն տեղում, երբ առանձնասենեակի դռները բաց եղան և երկու խօսակցողները ներս մտան։ Ես դարձեալ զգացի իմ գլխի վրայ մեկի ձեռքը և ցնցուեցի։ Հօրս ձեռքն էր այն, որով փաղաքշում էր մազերս։

Տիբուրցին ինձ վերցրեց իր ձեռքին և նստեցրեց Հօրս ներկայութեամբ, իր ծնկների վրայ։

—Արի մեզ մօտ, ասաց նա. հայրդ Թոյլ կըտայ վերջին անգամ տեսնուելու իմ աղջկայ հետ... Նա... նա մեռաւ։

Տիբուրցու ձայնը դողդողում էր, նա օտարոտի կերպով բաց ու խուփ էր անում աչքերը, բայց խոկոյն վեր կացաւ, դրեց ինձ յատակի վրայ, ուղղուեց և արագ հեռացաւ սենեակից։

Ես բարձրացրի գլուխս, որ մի բան հարցնեմ։

Այժմ իմ առաջ կանգնած էր ուրիշ մարդ և հէնց այդ մարդու մէջ գտայ ես այն բարեկամութիւնը, որ ի զուր էի որոնում առաջ։ Նա նայում էր ինձ վրայ իր սովորական, քիչ խաւար հայեացքով, բայց այժմ այդ հայեացքում նկատւում էին միայն մտմտուք, քնքշութիւն և կարծէք հարցմունք։

—Ես վերցրի նրա ձեռքը և ասացի.

—Ես խո չեմ դողացել... Սոնեան տուեց ինձ առ ժամանակ:

—Այո, պատասխանեց նա մտախոհութեամբ,—ես գիտեմ: Ես մեղաւոր եմ քո առաջ, երեխաս, և դու կաշխատես երբ և իցէ մոռանալ այդ, այնպէս չէ՞:

Ես շուտով բռնեցի նրա ձեռքը և սկսեցի համբուրել: Ես գիտէի, որ այժմ նա չի նայիլ ինձ վրայ այն խիստ աչքերով, ինչպէս նայում էր մի քանի րոպէ առաջ և վաղուց թաքնուած սէրը աւելի սաստկացաւ: Այժմ ես նրանից էլ չէի վախենում:

—Դու կըթողնե՞ս ինձ, որ դնամ սարի դլուխը, հարցրի ես, մտաբերելով յանկարծ Տիբուրցու հրաւէրը:

—Այո, դնա, դնա... սիրելիս, վաղաքշանքով ասաց նա, դեռ էլի այն ձևով.—Այո, միայն, սպասիր, խնդրեմ, սիրելիս, քիչ սպասիր:

Նա դնաց իր ննջարանը և մի րոպէից յետոյ դուրս գալով այնտեղից, ձեռքս դրեց մի քանի կտոր թուղթ:

—Յանձնիր այս... Տիբուրցուն... Ասա, որ ես խոնարհաբար խնդրում եմ... Հասկանո՞ւմ ես... խոնարհաբար խնդրում եմ վերցնել այս փողերը... քեզանից... հասկացա՞ր... Այժմ դնա, սիրելիս շուտ դնա:

Ես հասայ Տիբուրցուն սարի վրայ, հևալով, այնքան էլ լաւ չըկատարեցի հօրս յանձնարարութիւնը:

—Խոնարհաբար խնդրում է... հայրս... Եւ ես սկսեցի ձեռքը դնել հօրս տաք փողերը: Ես չէի նայում նրա դէմքին: Փողը նա վերցրեց:

Ստորերկրեայ քնակութեան մէջ, մի մութ անկիւնում, մի նստարանի վրայ, պարկած էր Մարուսեան: Մահ բառը դեռ լիակատար նշանակութիւն չունի մանկական լսելիքի համար. և դառն արտասուքը միայն այժմ, այս անշնչացած մարմինը տեսնելու ժամանակ, խեղդե-

ցին լինած: Իմ փոքրիկ բարեկամուհին լուրջ և տխուր դէմքով պարկած էր: Փակուած աչքերը քիչ խորն էին ընկել և քիչ էլ կապտել: Փոքր բերանը բաց էր, մանկական տխուր արտայայտութեամբ: Պարուսեան կարծէք իմ արտասուքիս պատասխանում էր իր դիմածռանքով:

Մէկն էլ մի անկիւնում թխկթխկացնում էր, պատրաստելով հին մատուռի տանիքից վայր ընկած տախտակներից մի դագաղիկ: Պարուսեային զարդարում էին աշնանային ծաղիկներով:

ՎԵՐՋԱԲԱՆ

Շուտով, նկարագրած անցքերից յետոյ, վատ հասարակութեան անդամները բաժանուեցան զանազան կողմեր: Տիրուրցը և Վալէկը բոլորովին անապասելի կերպով անյայտացան, և ոչ ոք չէր կարող ասել, թէ որ կողմը գնացին նրանք, ինչպէս ոչ ոք էլ չգիտէր, թէ որտեղից եկան նրանք մեր քաղաքը:

Հին մատուռը շուտ փչացաւ ժամանակի բերմունքից: Սկզբում ընկաւ նրա տանիքը, իր տակ թողնելով ստորերկրեայ բնակութեան առաստաղը: Յետոյ մատուռի շուրջը սկսեցին յառաջ գալ փլատակներ և ինքը մատուռը աւելի ևս խաւարեցաւ: Նրա մէջ աւելի բարձր են աղաղակում բուերը գերեզմանների վրայ, երբեմն լքած կրակները, աշնանանային մութ գիշերները կապոյտ չարագուշակ լոյս են արձակում:

Միայն մէկ ցանկապատած գերեզման կար, որ աշնանը կանաչում էր և փայլում գոյնզգոյն ծաղիկներով:

Ես Սօֆիայի հետ միասին, իսկ երբեմն էլ մինչև անգամ Հօրս հետ այցելում էինք այդ գերեզմանը: Մենք սիրում էինք նստել նրա վրայ, թխտենու շւաքի տակ: Մենք այստեղ քրոջս հետ միասին կարդում էինք, մեա-

սին մտածում էինք, յայտնում էինք միմեանց մեր առաջին մանկական կարծիքները, թեւաւոր ազնիւ երիտասարդութեան նախագծերը։

Իսկ երբ հասաւ ժամանակը նաև մեզ թողնելու մայրենի խաղաղ քաղաքը, հէնց այստեղ, վերջին օրը, մենք երկուսս, կեանքով և յոյսերով քաջալերւած՝ փոքր գերեզմանի վրայ տալիս էինք մեր վերջին խոստումները։

Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Հ, եթէ շուտով ես Հասկանայի
Սրթնութեան ձայնի փրկարար խօսքը,
Եթէ խաւարի ցնորքն յաղթէի
Եւ ըմբռնէի նոր կեանքի միտքը—

Ես այն ժամանակ կեանքիս օրերը
Դատարկ աղմուկով չէի անցկացնի
Անմիտ, անիմաստ թեթեւ կրքերով,
Առանց օգտակար, խիստ աշխատանքի...

Այլ թարմ և առոյգ, հպարտ ոյժերով
Ես դէմ կըգայի ցերեկւայ լուսին.
Հաստատ քայլերով առաջ կերթայի,
Ուր էլ որ տանէր ինձ կեանքի ուղին:

Իսկ այժմ թէև ինքնուրոյն, ազատ
Ես ոտ եմ կոխում դէպի նոր կեանքը,
Սակայն կորցրած ոյժերս պարձնել—
Աւա՛ղ, լղուր է իմ աշխատանքը:

Թարգ. ԵՐՈՒԱՆԴ ՂԱԶԱՐԵԱՆՑ



ՆՈՐ ԼՈՒՐԵՐ

Մրջիւնների թաղման ծիսակատարութիւնը։ — Ինչպէս յայտնի է մրջիւնների, այդ փոքրիկ գեռուններուն կեանքը ահագին ուսումնասիրութեան առարկայ է բնագէտների համար։ Դրանց համար ահագին գրքեր են գրուած լի սմենահետաքրքրական տեղեկութիւններով. օրինակ յայտնի է որ մրջիւնների մէջ կան դասակարգեր, կան տէրեր ու ծառաներ. կան տիրապետողներ եւ ստրուկներ եւայլն։ Այժմ տիկին Վօատօն իր նկատողութիւններով գրտել է որ մրջիւնները նոյնպէս մարդկանց պէս հատարոմ են թաղման հանդէս. «Ես տեսայ, պատմում է տիկինը, թէ ինչպէս մեռած մրջիւնների չորս կողմը հաւաքուելին ահագին բազմութեամբ մրջիւններ։ Ես վրճռեցի ուշադրութեամբ հետեւել թէ դրանք ինչ պիտի է անեն։ Ես տեսայ թէ ինչպէս չորս թէ հինգ մրջիւններ բաժանուելին միւսներից եւ ուղղուելին դէպի մերձակայ բլուրը, ուր գտնւում էր նրանց բոյնը։ Նրանք մտան իրանց բոյնը եւ հինգ րոպէից դուրս եկան այնտեղից ուրիշ մրջիւնների ընկերակցութեամբ։ Նրանք ամենքը կարգով գոյդ-գոյդ շարուելին եւ ճանապարհ ընկան հանդարտ եւ հաւասար քայլերով դէպի այնտեղ ուր գտնւում էին մեռածների դիակները։ Երբ նրանք տեղ հասան, մրջիւններից երկուսն առաջ ընկան եւ բարձրացրին իրանց մեռած ընկերների մէկի դիակը, յետոյ ուրիշ երկուսը բարձրացրին մի ուրիշ դիակ եւայլն, այսպէս շարունակ մինչեւ որ բոլոր դիակները բարձրացրին։ Այն ժամանակ թաղման հանդէսը շարժւել հետեւել կարդով. — առաջից գնում էին երկու մրջիւններ մի դիակով, նրանց ետեւից երկուսն ազատ, յետոյ էլի մի զոյգ տանում էր մի դիակ եւ կրկին նրանց ետեւից երկու մրջիւն ազատ։ Շրջապատ կազմում էին քառասուն զոյգ եւ նրանց ուղեկցում էր մինչեւ 200 մրջիւն։ Երբեմն, երբեմն ամենքը կանգնում էին, դիակներ տանողները վայր էին դնում դիակը եւ նրան նորից բարձրացնում էր ետեւից եկող զոյգը։ Այսպէս հերթով, կարգով փոփոխելով մրջիւնները եկան հասան մինչեւ աւազոտ ափը եւ այնտեղ հանդէսին ուղեկցող մրջիւնները իրանց ծրնօտներով մի-մի փոս փորելին իւրաքանչիւր հանգուցեալի համար, ամեն մի փոսի մէջ մի դիակ դրին եւ գերեզմանները հողով ծածկելին։ Այստեղ մի զարմանալի դէպք պատահեց.—վեց մրջիւնները փափսան, չկամենալով մասնակցել թաղման աշխատութեանը. այն ժամանակ մրջիւններն ամբոխով յարձակուելին փախստականների վրայ, քաշ տուին նրանց ամենքին թաղման տեղը եւ ամենքին կոտորելին եւ յետոյ մի փոս փորելով բոլոր յանցաւորներին միասին թաղելին նրա մէջ»։



Բալեայ Մարդասիրական Ընկ. կառուցանելի ուսումնարանը.

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Ա. Սարդարեան.

1) Երկու բառ են՝ վեց տառով
Ըսկսւում բաղաձայնով,
Իրարու շատ նմանւում
Նոյն տառով էլ վերջանում։
Մէկի մէջ միայն ա է,
Բայց չըկարծէք թէ բայ է.
Միւսի մէջ ձայնաւոր ո
Շըմանգաք վեր ի վերոյ։
Երկուսն և եթ գոյական
Անուններ են՝ նիւթական.
Մէկը խիստ պինդ քարի պէս,
Միւսը փափուկ եղի պէս։
Թէև ծովին ոխերիմ՝
Բայց յատակում տեղ ունիմ.
Առանց ինձի ոչ մի նաւ
Չի շարժւիլ տեղից բընաւ։
Իսկ ես քաղցր կերակուր,
Մի՛ որոնիր ինձ իզուր.
Բարիկենդանը եկաւ
Իմ գովրանը բացւեցաւ։

—

Առաջ. Նոյն.

4) Այն ո՞վ է, ասա՛, որ միշտ աներկիւղ,
Արձակ համարձակ մտնում ամեն գիւղ,
Եւ ինչպէս Գաբրիէլ, մղրախը ձեռքին,
Խլում, թալանում նրանց կայքը վերջին։
Բայց այդ դեռ ոչինչ, նա սրա համար
Վայելում է այսօր յարգանք անհամար։

№ 10-ՈՒՄ ՏՊՈՒԱԾ 1) ԱՌԱՋԱՐԿՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ

Խ. Գրիգորեանց.

1889 թ. Հոկտեմբերի համարում,
«Աղբիւրի» զարճալիքների բաժնում,
Առաջին առաջարկութիւնն եմ կարդում,
«Թէ հիասթափւել բառը ո՞ր տեղում»։
Եւ ո՞վ է ամենից առաջ գործածում»։
Յետ համաշխարհային ջրհեղեղից,
Երբ Նոյ իջաւ տապանից,
Տնկեց այգի խաղողից,
Գինի պատրաստեց բերքից։
Խմեց գինին և հարբեց,
Որից բռնաճ քնեց,
Գինից յետոյ հ ի ա ս թ ա փ ւ ե ց,
Այն օրից այդ բառը ծնւեց
Սուրբ գրոց մէջը տպւեց։
Եթէ ուղիղ եմ լուծել,
Խնդրեմ արժան համարել,
Մի գիրք ինձի ընծայել,
Եւ այս գրւածքս հրատարակել։ *)

---

*) Սա պատասխանը չէ, բայց զարճալի է։
Նախընթաց №-ում եղած հանելուկի բացատրութիւնը՝ «Սիսուան»։

Խմբագիր-հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 20 Декабря 1889 г.

Типографія И. Мартиросіанца, Орб. ул., д. № 1—2.

ՅԱԽԵԼԻԱՆԻ „ԱՂԲԻՒՐԻ“

ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Կը հրատարակի Թիֆլիսում առաջիկայ յունուարի մէկից մեր յայտնի հեղինակների, նկարիչների մասնակցութեամբ, ամիսը մի անգամ քառածալ, մօտաւորապէս ռուսաց „Живописное Обозрѣніе“ հանդիսի դիրքով։

ՏԱՐԱԶԻ նպատակն է հայ անդաստանում ցանել գեղեցկի և բարւոյ սերմեր ու արմատախիլ անել տգեղ և չար ոլոմն։

ԳԵՂԱՐՒԵՍՏԸ լինի նա արտայայտած բանաստեղծի վառ շրթունքով, հրաշագործ նկարչի վրձինով, թէ սիրտ տրոփացնող վիպագրի ղրչով Տարազում առաջին տեղը պիտի բռնէ։

Կանանց խնդիրը, լուսաւոր և մեր աշխարհի կնոջ վիճակը, դրութիւնը, արդի ընդհանուր գրականութեան մէջ տիրապետող այդ խնդրի վերաբերեալ վիճաբանութիւնների հետեւանքը պարբերաբար կարձանագրւին Տարազում։ Քնն տգատութիւն մեր առօրեայ կեանքի, լինի նա արտայայտած վէպով, պատմածով, ֆելիէտոնով թէ կատակով Տարազի գրական մասը պիտի կազմեն։

Տարազի մի երրորդական մասը կը կազմեն պատկերներ, նկարներ, տեսարաններ, թէ արդի և թէ անցած դնայած, գլխաւորապէս մեր կեանքի։ Հայ կինը ամեն ամիս Տարազում կը գտնէ եւրոպական նորագոյն կար ու ձեւի, ձեւագործի վերաբերեալ բացատրութիւններ, համարեա այն չափով որքան տալիս է ռուսաց „Нива“ շաբաթաթերթը։

Նրանք բաժանորդների թիւը հասնի 3000-ի, այն ժամանակ լոյս կը տեսնեն հետեւեալ կերպով

Ամեն ամսի մէկին „ԱՂԲԻՒՐԸ“
« « տասին „ՏԱՐԱԶԸ“
« « քսանին „ԱՂԲԻՒՐԻ“ Բ. ԲԱԺԻՆԸ,

ՈՐ ԿԸՀՐԱՏԱՐԱԿԻՒ ՆՈՅՆ ՁԱՓՈՎ, ՈՐՔԱՆ ԵՒ Ա. ԲԱԺԻՆԸ։

«Տարազի» բաժանորդագինը 3 ր. է «Աղբիւրինը» 3 ր. և 28 կ. փոստի մարկա, իսկ «Աղբիւրին» ու «Տարազին» միասին առորագրուողը, մինչև դեկտեմբերի 1-ը, մի և նոյն հասցէով փոխանակ 6 ր.՝ 5 ր.

Հասցէն՝ Тифлисъ, „Агбюръ“ „Таразъ“.

Издание Евангелие. Тифлисъ, 4-го января 1889г.
Тип. „Арарат", Гл. Нагарянъ. Уг. Головин. пр. и Барят. уд.

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԵՂԱ «ԱՂԲԻՒՐ» ԵՒ «ՏԱՐԱԶԱՆ» ԱՂԵՐ ԵՐԱՇԱՆԱՎՈՐ

Տպարան „ՄՐՕՐ" Տ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ЖУРНАЛЪ ДЛЯ ДѢТЕЙ ШКОЛЬНАГО ВОЗРАСТА

Въ наступающемъ 1890 году „Родникъ“ будетъ издаваться въ томъ же духѣ и направленіи, что и въ минувшія 8 лѣтъ.

Содержаніе „Родника“ составляютъ: I. Стихотворенія, повѣсти, разсказы и сказки (преимущественно народныя). II. Біографіи замѣчательныхъ людей, главнымъ образомъ „людей труда и сильной воли“. III. Историческіе очерки. IV. Статьи научнаго содержанія, по различнымъ областямъ знанія. V. Очерки изъ современной жизни. VI. Смѣсь (мелкія статьи). VII. Дѣло и отдыхъ (игры, занятія загадки и проч.)

„Родникъ“ выходитъ ежемѣсячно (въ первыхъ числахъ каждаго мѣсяца) книжками большаго формата не менѣе 7 печатныхъ листовъ каждая, со многими рисунками въ текстѣ, портретами и отдѣльными картинами. Годовое изданіе „Родника“ составляетъ 2 большихъ тома, около 700 страницъ каждый 100—120 рисунками.

„Родникъ“ рекомендованъ и одобренъ ученымъ и учебнымъ Комитетами Мин. Нар. Просв., Святѣйшаго Синода и Собственной Е. И. В. канцеляріи по учрежденіямъ Императрицы Маріи. Удостоенъ малой золотой медали на педагогической выставкѣ Общества Трудолюбія въ Москвѣ, въ 1888 г.

Вмѣстѣ съ „Родникомъ“ можно получать ежемѣсячный педагогическій листокъ **„ВОСПИТАНІЕ и ОБУЧЕНІЕ“.**

УСЛОВІЯ ПОДПИСКИ НА „РОДНИКЪ“ 1890 г. прежнія:

На годъ съ доставкой и пересылкой за 12 книгъ „Родника“ . . . 5 руб.
Тоже съ приложеніемъ 12 №№ листка „Воспитаніе и Обученіе“ . . 6 руб.
За границу . . . . . 8 руб.
Отдѣльно листокъ „Воспитаніе и Обученіе“ . . . . . 2 руб.

Адресъ редакціи: С.-Петербургъ, Кирочная ул., д. 25.

Редакторъ-Издательница Е. Сысоева.
Редакторъ Алексѣй Альмединген.

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

«ՄՈՒՐՃ» ամսագիրը 1890 թուականին կը հրատարակուի նոյն դիւրքով, բայց աւելի էլ մեծ ծաւալով, քան 1889 թուականին։

Սոյն 1889 թուականի համար խոստացած էր ամբողջ 8—10 թերթ, կամ 128-ից մինչ 160 երես, բայց տուեց աւելի, այն է, 9-ից մինչ 13 թերթ ամբողջ, կամ որ նոյնն է՝ 144-ից մինչ 208 երես։ Այժմ, դալ 1890 թ. համար, մենք խոստանում ենք տալ մեր բաժանորդներին ոչ թէ 8—10 թերթ, այլ 9—11 թերթ իւրաքանչիւր ամիս։

«ՄՈՒՐՃ»-ի ծրագիրը նոյնն է մնալու, ինչ էր և սոյն 1889 թ., այն է՝

1. Յօդուածներ գրական, տնտեսական, իրաւական, պատմական և հոգևոր բովանդակութեամբ։ 2. Բանասիրական՝ վէպեր, պատմութիւններ, դրամաներ, ոտանաւորներ, երգիծաբանութիւն։ 3. Յօդուածներ Կովկասեան կեանքի հասարակական խնդիրներից։ 4. Թղթակցութիւններ Թուսաց տէրութեան և արտասահմանի զանազան տեղերից։ 5. Յօդուածներ գիտութեան զանազան ճիւղերից։ 6. Գրախօսութիւն և Քննադատութիւն։ 7. Հաշիւներ այլ և այլ ընկերութիւնների։ 8. Թատրոն, Երաժշտութիւն, Դեղարուեստ։ 9. Տեսութիւն ներքին և արտաքին քաղաքական անցքերի։ 10. Ներքին և Արտաքին Քրոնիկոն և զանազան լուրեր։ 11. Յայտարարութիւններ։

Մենք լոյս ունինք, որ Հայ Հասարակութիւնը կիմանայ գնահատել «ՄՈՒՐՃ»-ի նշանակութիւնը Հայկական կեանքում և իր համակրութիւնը դէպի «ՄՈՒՐՃ»-ը և մեր ջանքերը կատարեալ տալով մեզ մեծ թուով բաժանորդներ։

Բաժանորդագրութիւնը 1890 թուականի համար սկսած է։ Մենք խնդրում ենք ցանկացողներին բաժանորդ գրուել որքան կարելի է վաղօրօք, որպէս զի առաջուց մենք մեր պատրաստութիւնները կարողանանք տեսնել։

«ՄՈՒՐՃ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՐՈՒԲԼԻ։

Խմբագիր-հրատարակիչ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

Հասցէն՝ Тифлисъ. Редакція журнала „МУРЧЪ“.